ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

ապրիլի 2021 թվականի № Ա
ք. Երևան

«ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0257 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի ապրիլի 21-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 20-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ռինդ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման լիցենզիա տրամադրելու մասին» №311Ա որոշմամբ «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի «ՄՏՔԻ ԲԱՆԱԼԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության №0257 լիցենզիան վերաձևակերպելու մասին» №288Ա որոշմամբ «ԷՐԻԷՄ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անվամբ որպես էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա վերաձևակերպված №0257 լիցենզիան՝ լիցենզիայի պայմաններում «գտնվելու վայրը» տողը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ավան Առինջ 1 մկրշ, շ.1/4, բն 5»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 27-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
ապրիլի 2021թ.